

## Արտաքին մարտահրավերները և խորհրդարանական դիվանագիտությունը

Հայաստան - Սփյուռք համահայկական համաժողովի հարգարժան մասնակիցներ,  
Հարգելի ներկաներ,

Նախևառաջ թույլ տվեք ողջունել ձեզ այս համաժողովին:

Երեկ հնարավորություն եմ ունեցել մասնակցելու Համաժողովի բացմանը և պետք է նշեմ, որ տպավորված եմ Հանրապետության Նախագահի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի, Արցախի Հանրապետության նախագահի և մյուս բանախոսների ծրագրային ելույթներով:

Այսօր համաժողովի շրջանակում պատիվ ունեմ ներկայացնելու խորհրդարանական դիվանագիտությունը հենց այն հարցադրումների շրջանակներում, որոնք սահմանված են համաժողովի աշխատանքների օրակարգում: Ես կփորձեմ խոսել խորհրդարանական դիվանագիտության մասին և այն խնդիրների շուրջ, որոնց լուծման համար Հայաստանի և Սփյուռքի կառույցների համատեղ ջանքերի համալրումը կենսական կարող է լինել:

Արտաքին քաղաքականության ոլորտում խորհրդարանական դիվանագիտությունն ունի մի շարք տարբերություններ գործադիր իշխանության համապատասխան մարմնից: Այդ տարբերությունները թե կառուցվածքային բնույթի են, թե բովանդակային և թե քաղաքական ու իրենց դրոշմն են թողնում խորհրդարանական դիվանագիտության ձևավորման վրա: Այս համատեքստում կցանկանամ անդրադառնալ խորհրդարանական դիվանագիտության այն տարբերություններին, որոնք էլ ձևավորում են վերջինիս յուրահատկությունները, դրանցից բխող առանձնահատկություններն ու խնդիրները:

Նախևառաջ, կցանկանամ ընդգծել այն հանգամանքը, որ խորհրդարանական դիվանագիտության մեջ ներագրավված է ոչ միայն իշխանությունը, այլ նաև ընդդիմությունը: Եթե գործադիր իշխանության պարագայում արտաքին քաղաքականության օրակարգի վերաբերյալ կառավարության ներկայացուցիչը ներկայացնում է բացառապես իշխանական տեսակետներ, ապա խորհրդարանական դիվանագիտության պարագայում խորհրդարանական ընդդիմությունը այդ դիվանագիտության բաղկացուցիչ և լիարժեք մասն է: Սա, իհարկե, կարևոր նրբերանգ է, որպեսզի մենք դիտարկենք խորհրդարանական դիվանագիտությունը՝ որպես շատ ավելի լայն դիվանագիտական գործիքակազմ ունեցող, լրացուցիչ հնարավորություններ և խնդիրներ ներկայացնող դիվանագիտական գործիք:

Երկրորդ կարևոր առանձնահատկությունն այն է, որ խորհրդարանական դիվանագիտության մեջ ներգրավված պատգամավորները ոչ թե նշանակովի

պաշտոնյաներ են, այլ ընտրված ներկայացուցիչներ: Այս պարագայում յուրաքանչյուրն ունի իր նախընտրական ծրագրի շրջանակում ընտրողների վստահության քվե, իրավասու է արտաքին քաղաքական օրակարգի համատեքստում առկա հարցերի վերաբերյալ ներկայացնել այն ընտրազանգվածի կարծիքը, ում քվեն ստացել է: Սա նույնպես կարևոր առանձնահատկություն է, և այստեղ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ պատգամավորները հրապարակային գործիչներ են և ավելի շատ են կախված հասարակական կարծիքից, իրենց ընտրողների տեսակետից, քան գործադիր իշխանության ներկայացուցիչները:

Կցանկանայի անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ խորհրդարանական դիվանագիտության հարթակը շատ ավելի ներառական է, քան գործադիր իշխանությանը: Փաստացիորեն, խորհրդարանական ձևաչափը թույլ է տալիս ի թիվս այլ կառույցների ներառել, կենտրոնացնել նաև հասարակական այն ինստիտուտները, հատվածները, վերլուծական խորհուրդներն ու զանգվածային լրատվության միջոցները, որոնք հետաքրքրված են արտաքին քաղաքականությամբ:

Խորհրդարանական դիվանագիտության կարևոր առանձնահատկություններից է նաև արտաքին քաղաքական գործընթացում ներգրավված քաղաքական ուժերի գաղափարախոսության առկայությունը: Պետք է փաստել, որ քաղաքական ուժերը ոչ միայն անհատներ են, այլև գաղափարախոսություններ կրողներ՝ իրենց քաղաքական բնույթով պահպանողականներ, ինչպիսիք Հանրապետական կուսակցությունն է, սոցիալիստական աշխարհայացքի տեր «Դաշնակցություն»-ը, լիբերալ-ազատական դաշտի ներկայացուցիչ «Ելք»-ը և եվրոպական կոնսերվատորների ընտանիքի անդամ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը:

Հաջորդ կարևոր առանձնահատկությունն այն է, որ խորհրդարանական դիվանագիտության մեջ անմիջականորեն ներգրավված մարդկանց ընտրում են խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերը: Ի՞նչ է սա նշանակում: Եթե ծանոթանանք խորհրդարանական ընթացակարգերին, ապա կտեսնեք, որ խորհրդարանական պատվիրակությունները հիմնականում ձևավորվում են խմբակցությունների կողմից ներկայացված անհատների միջոցով: Սա նշանակում է, որ Ազգային ժողովի ղեկավարությունը «դե յուրե» իրավունք չունի բացարկ հայտնել այս կամ այն թեկնածուին, եթե չկան համապատասխան ֆորս-մաժորային պայմաններ: Այս հանգամանքը խորհրդարանական դիվանագիտության իրականացման գործընթացում քաղաքական ուժերին հնարավորություն է տալիս թե՛ տեսականորեն և թե՛ գործնականում առաջադրել մարդկանց, ովքեր, խոշոր հաշվով, համադրելի և համարժեք են առկա մարտահրավերներին կամ խնդիրներին դիմակայելու համար:

Այս բոլոր առանձնահատկություններով հանդերձ՝ խորհրդարանական դիվանագիտությունը շատ կարևոր գործիք է Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգում մեր ազգային և պետական շահերը առաջ տանելու համար:

Կցանկանամ անդրադառնալ նաև խորհրդանական դիվանագիտության իրականացման համար առկա գործիքակազմին:

Այժմ փորձենք հասկանալ՝ ինչպիսի գործիքներ ունի խորհրդարանը, և ինչպես է նա մասնակցում արտաքին քաղաքականությանը: Իհարկե, խորհրդարանն ունի «Ազգային ժողովի Կանոնակարգ» օրենքով նախատեսված մի շարք լիազորություններ: Օրինակ, խորհրդարանը կառավարության հետ հարց ու պատասխանի ժամանակ ազատ է՝ արտաքին գործերի նախարարին կամ վարչապետին ուղղելու արտաքին քաղաքականությանը վերաբերող հարցեր: Խորհրդարանը՝ ի դեմս պատգամավորների, ազատ է բանավոր կամ գրավոր հարցադրումներով դիմել կառավարությանը: Խորհրդարանի մասնագիտացված հանձնաժողովները պարտավոր են քննել պետական բյուջեի տարեկան հաշվետվության կամ բյուջեի նախագծային փուլում արտաքին քաղաքականության համար հատկացվող գումարները: Այս ամենը խորհրդարանական վերահսկողության մեխանիզմի մի մասն է, ինչը կիրառելի է նաև արտաքին քաղաքականության մեջ:

Խորհրդարանն ունի առնվազն մեկ մայր հանձնաժողով, որն ակտիվ կերպով ներգրավված է խորհրդարանական դիվանագիտության մշակման և իրականացման գործընթացում: Խոսքս վերաբերում է արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովին: Խորհրդարանում գործում է նաև Եվրոպական ինտեգրման հարցերով մշտական հանձնաժողովը, որի իրավասության ներքո են աշխատանքներն՝ ուղղված Եվրոպայի խորհրդի և Եվրամիության հետ հարաբերությունների խթանմանը: Այսքանով, իհարկե, խորհրդարանական դիվանագիտության միջոցները չեն սպառվում: Խորհրդարանական դիվանագիտության իրականացման գործուն մեխանիզմ են հանդիսանում նաև երկկողմ և բազմակողմ ձևաչափերում փոխադարձ այցելությունները:

Միջխորհրդարանական դիվանագիտության գործիքակազմի համատեքստում կցանկանամ ընդգծել նաև միջխորհրդարանական բարեկամության խմբերի դերը: Հայաստանի խորհրդարանն ներկայումս ունի 59 բարեկամական խմբեր, որոնց հետ արդյունավետ աշխատանքների իրականացման գործընթացի կազմակերպումը հանդիսանում է առանցքային խնդիր: Չեմ կարող չանդրադառնալ խորհրդարանական դիվանագիտության իրականացման միջհանձնաժողովային ձևաչափին, նաև ՀՀ ԱԺ պատվիրակությունների ներգրավվածությանը միջխորհրդարանական համաժողովների աշխատանքներին. Հայաստանի Հանրապետության խորհրդարանը հանդիսանում է մի շարք միջազգային կազմակերպությունների խորհրդարանական վեհաժողովների անդամ,

ինչպիսիք են՝ ԱՊՀ երկրների խորհրդարանական վեհաժողովը, ՀԱՊԿ-ի խորհրդարանական վեհաժողովը, Միջխորհրդարանական միությունը, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը, Արևելյան գործընկերության խորհրդարանական վեհաժողովը, ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովը, ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովը, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության խորհրդարանական վեհաժողովը:

Խորհրդարանական դիվանագիտության օրակարգի սահմանման հարցում մեծապես հաշվի են առնվում ընթացիկ և գլոբալ մարտահրավերները և դրանց դիմակայելու հարցում մեր կարողություններն ու հնարավորությունները:

Հարգելի գործընկերներ,

Երկար ժամանակ Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգը թելադրված է երկու կարևորագույն խնդիրներով՝ Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչմամբ և Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմամբ: Վերոնշյալ երկու հիմնախնդիրները այս կամ այն համամասնությամբ ներկայացված են եղել Հայաստանի արտաքին քաղաքականության գերակայությունների շրջանակներում՝ ինչպես գործադիր, այնպես էլ օրենսդիր իշխանության կողմից:

Գաղտնիք չէ և անհերքելի է, որ այս համամասնությունների մեջ Սփյուռքի ներուժը ավելի շատ ուղղված է եղել Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչմանը, և մենք համատեղ աշխատանքի շնորհիվ այս ուղղությամբ մեծ հաջողություններ ենք արձանագրել: Եվրոպական միության անդամ բազմաթիվ պետություններ արդեն ճանաչել են Հայոց Ցեղասպանությունը, Ամերիկայի Միացյալ Նահանգներում 50-ին է մոտենում այն նահանգների թիվը, որոնք ճանաչել են Ցեղասպանությունը: Տարբեր մակարդակներում՝ ինչպիսիք են օրինակ Լատինամերիկյան երկրները, այս միջազգային ճանաչման գործընթացն այժմ էլ ընթացիկ է: Այստեղ կարող ենք արձանագրել հաջողություններ, թեպետ մեր առաքելությունը չի ավարտվել: Գործընթացի վերջնակետը Թուրքիայի կողմից Ցեղասպանության միջազգային ճանաչումն է: Այս հարցում մեր առաքելությունն է ոչ միայն անցյալի իրադարձությունների առնչությամբ արդարության վերականգնումը, այլ նաև ապագայում մարդկության դեմ նոր ոճրագործությունների կանխարգելումը: Մեր խնդիրն է միջազգային հանրությանը ինտեգրել և մասնակից դարձնել մեր այս առաքելության իրականացման ջանքերին:

Ցավոք սրտի, պետք է փաստել, որ այս նույն ներուժը, ջանքերի այս նույնաձավալ համադրումը առ այսօր կամ չի իրականացվում, կամ մասամբ է իրականացվում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ: Այս խնդրի մասին ես պարտավոր եմ բարձրաձայնել և, անկախ ամեն ինչից, կարծում եմ, այս խնդիրը քննարկման անհրաժեշտություն ունի, քանի որ այսօր Հայաստանի արտաքին

քաղաքականության գերակա խնդիր են հանդիսանում այն սպառնալիքներին դիմակայելը, որոնք վտանգում են Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորումը: Ուստի, հաշվի առնելով տարածաշրջանային զարգացումները, չափազանց կարևոր է դառնում Սփյուռքի ներուժի ներգրավումը՝ Արցախյան հարցը միջազգային ճանաչման օրակարգ բերելու համար: Այս ամենից ելնելով՝ իմ հորդորն է Սփյուռքի քաղաքական, հասարակական շրջանակներին՝ օրակարգում պահել Լեռնային Ղարաբաղի խնդիրը՝ որպես Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչմանը իր կարևորությամբ չզիջող գործընթաց:

Այս տեսակետից, իհարկե, պետք է նաև շեշտել, որ՝ ըստ իս, մենք չենք կարող Հայաստանի արտաքին քաղաքական դիվանագիտությունը սահմանափակել բացառապես անվտանգային խնդիրներով: Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգը պետք է համեմված լինի նաև այլ խնդիրներով, մասնավորապես՝ տնտեսական զարգացման հեռանկարներով, Հայաստանի մասնակցությամբ տարբեր ինտեգրացիոն գործընթացներին ու միավորումներին, ինչպես նաև մասնակցությամբ գլոբալ աշխարհին հուզող խնդիրներին՝ լինի դա գլոբալ տաքացումը, օգոնային ճեղքը, գենդերային, ծնելիության խնդիրները և այլն:

Կարծում եմ, որ մեր պատվիրակությունների առջև խորհրդարանի կողմից խնդիր է դրվում Հայաստանը դարձնել ակտիվ և նախաձեռնող երկիր ոչ միայն իր նեղ ազգային, պետական օրակարգի շրջանակներում, այլև միջազգային հարթակներում:

Այստեղ կցանկանամ ավարտել խոսքս և մեծ սիրով կպատասխանեմ հարցերին, եթե այդպիսիք լինեն:

Շնորհակալություն:

**Արմեն Աշոտյան**

ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ